


ԵԿԵՂԵՑՈՒ ԾԻՍԼԿԱՆ ԿԵԼՆԲԸ ԵՒ ԵՕԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Մասն Դ.



Թարգմանեց ու խմբագրեց՝
ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղապարեան

ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

«Աստուած մի ժամանակ ո՛չ մարմին ունենալով, ո՛չ էլ կերպարանք, չէր կարող որեւէ կերպ ներկայացուել պատկերներով: Բայց այժմ, երբ յայտնուեց մարմնում եւ ապրեց մարդկանց հետ, կարող եմ պատկերել այն՝ ինչը որ Աստծոյ կեանքից տեսել եմ: ... Բաց դէմքով մենք հայում ենք Տիրոջ փառքին»¹: Չենք կարող ներկայացնել անտեսանելի ու անըմբռնելի Աստծուն. Աստծոյ Որդու Մարդեղութիւնն է՝ որ սկիզբ է տուել պատկերների նոր տնտեսութեանը:

Քրիստոնէական սրբանկարչութիւնը պատկերների միջոցով ընդօրինակում է աւետարանական պատգամը, որը Աստուածաշունչը աւանդում է Խօսքով: Սրբանկարը եւ Խօսքը փոխադարձաբար լուսաւորում են միմեանց: Ինչպէս նիւթական գրքերի ընթերցումն է հնարաւոր դարձնում Տիրոջ կենդանի խօսքի ըմբռնումը, նմանապէս սրբապատկերների հայեցողութիւնը հնարաւոր է դարձնում փրկութեան խորհուրդներին մերձեցումը տեսողութեան միջոցով: «Այն՝ ինչը որ մէկ կողմից արտայայտուած է թղթով ու թանաքով, միւս կողմից, սրբապատկերում, արտայայտուած է զանազան գոյներով ու ա՛յլ նիւթերով»²:

Սրբապատկերները, Աստծոյ Խօսքի շուրջ խորհրդածութեանը եւ ծիսական երգեցողութեանը միացած, մաս են կազմում արարողութեան նշանների ներդաշնակութեանը, այնպէս՝ որ ծիսակատարուած Խորհուրդը տպաւորուի սրտի յիշողութեան մէջ եւ ապա արտայայտուի հաւատացեալների նորոգուած կեանքում:

«Սրբապատկերների գեղեցկութիւնը եւ գոյնը խթան են աղօթքներիս համար: Տօն են աչքերիս համար, ինչպէս որ գեղատեսիլ բնութիւնն է սիրտս մղում փառաւորելու Աստծուն»³:

Սրբապատկերների վերաբերեալ ուղղափառ ուսմունքը

Անհնարին է խօսել Ծէսի մասին եւ որոշակի խորութեամբ չներկայացնել սրբապատկերների վերաբերեալ ուղղափառ ուսմունքը: Այն բոլոր ընդգիմութիւններին, որոնք դարերի ընթացքում ուղղուել են սրբապատկերների գործածութեան դէմ, ուղղափառ աւանդութիւնը պատասխանում է սրբապատկերների իր աստուածաբանութեամբ, որը հիմնուած է քրիստոսաբանական հարցերի ճշգրիտ ըմբռնման վրայ, այն հարցերում՝ որոնք վերաբերում են Տիրոջ եւ Նրա կեանքի զանազան դրուագների պատկերահանմանը, դրուագներ՝ որոնցում Նա ներկայանում է իր աստուածային փառքով. հիմնուած է նաեւ նիւթի եւ հոգու, էութեան եւ ներգործութիւնների, անստեղծի եւ ստեղծուածի, երկնաւորի եւ երկրաւորի, յաւիտենականի եւ ժամանակաւորի, բնօրինակի եւ նրա պատկերաւորման շուրջ եկեղեցու ուսմունքի ճշգրիտ բացատրման վրայ. եւ վերջում, համապատասխանում է աստուածային հետ հանդիպման հնարաւորութեանը, եւ վերջինիս անցքին՝ պատկերաւորուած բնօրինակի միջով, յատկապէս երբ խօսքը վերաբերում է Աստծոյ սրբերի եւ հրեշտակների սրբապատկերներին:

Իրօք, Արեւելեան Աւանդութիւնը վճռականօրէն առաջնորդում է դէպի սրբապատկերների իրականութիւնը: Այս Աւանդութիւնն ուսուցանում է աստուածային մարդեղութեան գեղագիտական արտայայտութեան աստուածաբանական արժէքը, պատկերը ծառայեցնելով աստուածային տնտեսութեանը. ճանաչում եւ ընդունում է քրիստոնէական կեանքից ներս սրբապատկերների ունեցած հոգեւոր օգտակարութիւնը, որպէս «անգրագէտների

¹ Սբ. Յովհան Դամասկացի, *De sacris imaginibus oratio* 1, 16.

² Թէոդորոս Ստուդիթ, *Antirrheticus* 1, 10.

³ Սբ. Յովհան Դամասկացի, *De sacris imaginibus oratio* 1, 47.

Աստուածաշունչ», Յովհան Դամասկացու համաձայն, որ հաստատում է. «Այն՝ ինչ որ է Աստուածաշունչը ընթերցող անձանց համար, նոյնը սրբապատկերն է անգրագէտների համար. եւ այն՝ ինչ որ է խօսքը լսողութեան համար, նոյնը սրբապատկերն է տեսողութեան համար: Մենք սրբապատկերներին մերձենում ենք իմացականութեամբ»¹:

Ուղղափառ աւանդութիւնը հասնում է աւելի հեռուն. դաւանում է՝ որ սրբապատկերի միջոցով քօղազերծւում է աստուածային Անձի ներկայութեան բացայայտումը: Այլաբանական խորհրդապատկեր չէ. Եկեղեցին հաստատում է՝ որ հարկաւոր է պատկերել մեր Տէր եւ Աստուած Յիսուս Քրիստոսի մարդկային կերպարանքը, Քրիստոսի՝ որ աշխարհի մեղքը ջնջող Գառն է: Հարկաւոր է սրբապատկերներով ներկայացնել Քրիստոսին, աւելի՛ քան ներկայացնել գառան այլաբանական պատկերով, ինչպէս վարւում էին սկզբում: Այսպէս վարուելով, կարող ենք ըմբռնել Աստուծոյ Որդու խոնարհութիւնը եւ անդադար մտաբերել Նրա գործունէութիւնը որպէս մարդկային անձ, Նրա չարչարանքները, Նրա մահը եւ մարդկութեան փրկութիւնը:

Ահա թէ ինչու է սրբապատկերը սրբազան անձը ներկայացնում ո՛չ իր բնական չափանիշներով, կամ է՛լ աւելի պարզօրէն՝ այլաբանական խորհրդապատկերով, այլ փառահեղ եւ երկնային կերպարանքով: Հաշուի առնելով այս ամէնը, Եկեղեցին հաստատում է՝ որ սրբապատկերները հաւատքի ճշմարտութիւններն արտայայտելու ամենագօրեղ կերպն են:

Մեծ իրաւացիութեամբ է ընդգծւում, որ Աստուծոյ Որդին, որի մէջ է «մարմնապէս բնակւում աստուածութեան ամբողջ լիութիւնը»², խոստացուած, յայտնուած Խօսքը, որը խօսեց, շօշափուեց եւ ունկնդրուեց, անմնացորդ կերպով բովանդակուած է Աստուածաշնչի մէջ: Պօղոս Առաքեալը սահմանում է սրբապատկերների քրիստոսաբանական հիմքը. Քրիստոս «անտեսանելի Աստուծոյ տեսանելի պատկերն (eikón) է»³: Ուրիշ խօսքերով, Տիրոջ տեսանելի մարդկութիւնը իր անտեսանելի աստուածութեան պատկերն է, կամ՝ աստուածութեան անտեսանելի տարրի տեսանելի կերպարանքը:

Այս ամէնից հետեւում է՝ որ Տիրոջ պատկերը (eikón) ներկայանում է որպէս Աստուծոյ եւ մարդու պատկերը, այսինքն՝ որպէս մարդ-Աստուծոյ պատկերը: Հիմնական պատճառաբանութիւնը հետեւեալն է. ըստ իր աստուածութեան լինելով Որդին, Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ ստեղծուած մարդու համազոյակից Պատկերը դառնում է – եւ մնում իր Մարդեղութիւնից յետոյ, մինչեւ ժամանակների վախճանը – Աստուծոյ հարազատ ու հաւատարիմ պատկերը: Այս պատճառով է Յիսուս յստակ կերպով հաստատում. «Ով տեսաւ ինձ, տեսաւ Հօրը»⁴: Սա նշանակում է՝ որ Տիրոջ մէկ եւ միակ Անձի մէջ միացած երկու բնութիւնները մեր առջեւ ներկայացնում են մարդ-Աստուած Յիսուսի միակ պատկերը, պատկերը՝ որ արտայայտում է նոյն ինքն Աստուծուն, թէեւ Նա բացարձակ կերպով անըմբռնելի է ու աննկարագրելի:

Տէրը բոլոր պատկերների պատկերն է, նախապատկերը՝ որ իրենում բովանդակում է աստուածային էութեան ամբողջութիւնը: Յովհան Դամասկացին, այս հարցի վերաբերեալ, հաստատում է. «Սրբապատկերները տեսանելի մասն են իրականութեան, որն ինքըստինքեան անտեսանելի է ու աննկարագրելի: Այս անտեսանելի ու աննկարագրելի իրականութիւնը պատկերւում է միմիայն մէկ նպատակով. թոյլատրելու համար ըմբռնել հազիւ ընկալելի եղանակով: ... ”Իրօք, աշխարհի ստեղծումից ի վեր, Աստուծոյ անտեսանելի կատարելութիւնները կարող են իմացականութեամբ տեսնուել Նրա կողմից կատարուած գործերում»⁵: Իրականում,

¹ Սբ. Յովհան Դամասկացի, *De sacris imaginibus oratio* 1, 17.

² Կղս 2, 9

³ Կղս 1, 15

⁴ Յվհ 14, 9

⁵ Հռմ 1, 20

ստեղծուած իրողութիւններում մենք տեսնում ենք պատկերներ (eikónes), որոնք հազիւ ընկալելի եղանակով յիշեցնում են մեզ աստուածային յայտնութիւնները»¹: Այս իսկ պատճառով, մենք տեսնում ենք Աստծուն – որին անհնարին է նկարագրել եւ պատկերել – միմիայն ընդմէջ իր աստուածային-մարդկային Անձի. Հօր Որդին եւ Խօսքը:

Աստուածաբանական այս քննարկումը Գրիգոր Պալամասը փաստում է հետեւեալ կերպ. Աստուած, ըստ իր էութեան անճանաչելի ու անընկալելի, ամբողջովին վերանցական լինելով, փորձառական գետնի վրայ դառնում է միաժամանակ նաեւ մասնակցելի, քանի որ Աստուած Նա է՝ որ է եւ լինելու է, Նա՝ որ ներկայ է բոլոր ներգործութիւններում, այն ներգործութիւններում՝ որոնք աստուածային մարդեղութիւնը – մարմնացած եւ մարդացած Որդին – դարձնում է մարդու կողմից յաւիտեան մասնակցելի, մարդու՝ որը տեսնելու է Տիրոջը Նրա երկրորդ գալստեան օրը: Յայնժամ մարդը տեսնելու է աստուածային ինքնա-յայտնութեան «Դէմքը», «Երեսը»: Երբ կը կերպարանափոխուի Տիրոջ փառքի մէջ, արդարացուած իւրաքանչիւր մարդ կը տեսնի Աստծուն երես առ երես, դէմ յանդիման: «Քանի որ այժմ տեսնում ենք ինչպէս հայելու մէջ, աղօտ եղանակով. բայց յայնժամ տեսնելու ենք երես առ երես: Այժմ անկատար է ճանաչողութիւնս, բայց յայնժամ կը ճանաչեմ կատարեալ կերպով, ինչպէս ես ինքս էլ ճանաչուած եմ»²: Եւ այդ «Դէմքը», այդ «Երեսը» լինելու է միեւնոյն մարդացած Խօսքինը, որը «պատկերն է անտեսանելի Աստծոյ, ծնուած՝ բոլոր արարածներից առաջ»³:

Սրբապատկերը վկայում է մի Աերկայութիւն

Հետեւաբար, Տիրոջ աստուածային եւ մարդկային Անձն է՝ որ սրբապատկերում տեսանելի է դարձնում Աստծոյ անտեսանելի էութիւնը: «Միմիայն երբ կը տեսնես անմարմինը քեզ համար մարդ դարձած, – հաստատում է Յովհան Դամասկացին, – կը կարողանաս ներկայացնել մարդկային կերպարանքի պատճէնը: Միմիայն երբ անտեսանելին տեսանելի կը դառնայ մարմնում, կը կարողանաս ստանձնել նմանութիւնը նրա՝ ում տեսել ես: Միմիայն երբ անմարմինը, անպատկերելին, անորակելին եւ անչափելին, Նա՝ ով իր էութեան գերազանցութեան պատճառով գերիվեր է բոլոր մեծութիւններից ... եւ որ յանձն առնելով ծառայի կերպարանքը՝ սահմանափակուում է նրանում ... յայնժամ կը կարողանաս գծագրել եւ ողորկ մակերեսների վրայ պատկերուած ներկայացնել Նրան՝ ով կամեցաւ տեսանելի դառնալ»⁴:

Քրիստոսի սրբապատկերը վկայում է մի ներկայութիւն, նոյն իր ներկայութիւնը, որը թոյլատրում է հասնելու մասնակցողական հաղորդակցութեան, աղօթքի եւ յարութեան, հոգեւոր մի հաղորդակցութեան, խորհրդական (միստիկ) մի հանդիպման, սրբապատկերում պատկերուած Տիրոջ հետ: Անշուշտ, Քրիստոսի սրբապատկերը նոյն ինքն Քրիստոս չէ, ինչպէս Ամենասուրբ Հաղորդութեան մէջ հացը Տիրոջ մարմինն է, իսկ գինին՝ Նրա արիւնը: Սրբապատկերում ունենք Նրա Անձի ներկայութիւնը, որը չի գոյափոխում, ո՛չ էլ որեւէ փոփոխութեան ենթարկում նիւթը կամ գոյները կամ վրձինները: Այսուամենայնիւ, սրբապատկերը անձնաւորական կերպով վերարտադրում է իրենում պատկերուած Քրիստոսի դիմագիծն ու ինքնութիւնը. եւ սա Նրա սրբապատկերներից իւրաքանչիւրի գլխաւոր յատկութիւնն է: Սրբապատկերի ամբողջ խորհուրդը պարփակուած է զօրութեամբ ազդու եւ խորհրդաւոր նմանութեան

¹ Սբ. Յովհան Դամասկացի, *De sacris imaginibus oratio* 1, 11.

² 1Կր 13, 12

³ Կղս 1, 15

⁴ Սբ. Յովհան Դամասկացի, *De sacris imaginibus oratio* 1, 10.

մէջ, որը մեր միտքն ուղղում է դէպի բնօրինակը, այսինքն՝ Տիրոջ աստուածային եւ մարդկային էութեանը:

«Սրբապատկերը, – կրկին հաստատում է Յովհան Դամասկացին, – մի գծագրութիւն է, որ հաւատարմօրէն վերարտադրում է բնօրինակը, ունենալով հանդերձ մէկ տարբերութիւն. յիրաւի, սրբապատկերը բացարձակ կերպով նման չէ բնօրինակին: Իրօք, անտեսանելի Աստուծոյ կենդանի, բնական եւ ամբողջովին հաւատարիմ պատկերը միմիայն Որդին է, որ Իրենում կրում է Հօրը, Հօր ամբողջ էութիւնը, քանի որ Ինքն ու Հայրը ամբողջովին նոյն են եւ նման»¹:

Այսպիսով, հետեւաբար, Քրիստոսի սրբապատկերներից իւրաքանչիւրը պարունակում եւ ներկայացնում է Տիրոջ Անձը. եւ ճիշտ այս Անձն է այն տարրը, որ սրբապատկերի միջով ճառագայթում է դէպի դուրս եւ ճառագայթման ու ձգողականութեան շնորհիւ դառնում է մի միջոց՝ որը դիտողին կապում է բնօրինակին, վկայելով եւ աւետելով բնօրինակի ներկայութիւնը:

«Սրբապատկերներին մատուցուած պատիւը ուղղուած է բնօրինակին»²:

Յոյն Եկեղեցու Հայրապետական Ժողովներից մէկը (Նիկիայի Բ) բաւական յստակութեամբ է արտայայտում այս նիւթի վերաբերեալ. «... Երկու բնութիւններից մէկը աննկարագրելի է, մինչ միւսը նկարագրուած եւ դիտուած է Քրիստոսի միակ սրբապատկերի մէջ»³: Եւ սա՝ որպէսզի բոլորին հռչակուի, որ «Տիրոջ պատկերը վերարտադրելով, մենք մեծարում ենք աստուածացած մարմինը եւ սրբապատկերում ճանաչում ենք ուրիշ ոչինչ՝ եթէ ոչ միայն բնօրինակը ներկայացնող պատկերը: ...

Այս իսկ պատճառով, սրբապատկերը մեծարելի է եւ սուրբ»⁴:

Նմանօրինակ է նաեւ այս հարցի վերաբերեալ Յովհան Դամասկացու կողմից տրուած բացատրութիւնը. «Աստուած, որ անմարմին է ու անկերպարան, հին ժամանակներում չէր կարող որեւիցէ մէկ կերպով պատկերուել: Այժմ Աստուած յայտնուել է մարմնում եւ հաղորդակցութեան մէջ է մտել մարդկանց հետ. հետեւաբար, սրբապատկերի միջոցով ներկայացնում եմ այն՝ ինչ տեսնում եմ Աստուծոց: Չեմ մեծարում նիւթը, այլ մեծարում եմ նիւթի Արարչին, Նրան՝ ով ինձ համար դարձաւ նիւթ եւ յանձն առաւ բնակուել նիւթի սահմաններում եւ փրկեց ինձ նիւթի միջոցով: Երբէք չեմ դադարելու յարգելու նիւթը, որի միջոցով իրականացուեց իմ փրկութիւնը»⁵:

Հաստատելով սա, եւ ըստ այն մեկնաբանութեան՝ որ մինչ այժմ ներկայացրեցինք սրբապատկերների մասին Եկեղեցու ուսմունքի վերաբերեալ, կարող ենք լաւագոյնս ըմբռնել Նիկիայի Բ ժողովի ուսմունքային հետեւեալ սահմանումը. «Մենք սահմանում ենք ամենայն վստահութեամբ եւ եռանդով, որ ինչպէս ներկայացնում է Խաչի թանկարժէք ու փրկարար պատկերը, նմանապէս մեծարելի սուրբ պատկերները – լինեն դրանք գոյներով նկարուած, խճանկար կամ ուրիշ յարմար նիւթով – պէտք է ներկայ լինեն Աստուծոյ սուրբ եկեղեցիներում, սրբազան սպասների ու հանդերձների, պատերի ու խորանների վրայ, տներում ու ճանապարհներում: Թող լինեն դրանք պատկերները մեր Տէր Աստուած եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի, կամ մեր անարատ Տիրուհի Սուրբ Աստուածամօր, սուրբ հրեշտակների, բոլոր սրբերի ու արդարների: Իրօք, սրբապատկերների մէջ շարունակ ներկայացնելով ու դիտուելով, նրանք՝ ովքեր դիտում են, մղւում են դէպի պատկերուած բնօրինակի մտաբերումն ու փափաքը: Համբոյրը, որ դրոշմւում է սրբապատկերի վրայ, ըստ մեր հաւատքի՝ ստանում է ո՛չ թէ պաշտամունքի (բառի բուն իմաստով), այլ մեծարանքի իմաստ, քանի որ պաշտամունքը ուղղուած է միմիայն Աստուածային Բնութեանը: Այս մեծարանքը նման է ճշմարիտ եւ փրկարար

¹ Սբ. Յովհան Դամասկացի, *De sacris imaginibus oratio* 1, 9.

² Սբ. Բարսեղ Կեսարացի, *De Spiritu Sancto* 18, 45, 19.

³ Եպիփանոս Սարկաւազի խօսքը, *Mansi XIII*, 244.

⁴ Եպիփանոս Սարկաւազի խօսքը, *Mansi XIII*, 344.

⁵ Սբ. Յովհան Դամասկացի, *De sacris imaginibus oratio* 1, 16.

Խաչին, սուրբ Աւետարաններին եւ միւս սրբազան առարկաներին մատուցուած մեծարանքին: Ուրեմն, նրանց թող մատուցուեն խոնկ եւ վառուած մոմեր, եւ թող որ մեծարուեն հնագոյն բարեպաշտ սովորութիւնների համաձայն: Քանի որ սրբապատկերին մատուցուած պատիւը վերաբերում է բնօրինակին եւ ով մեծարում է սրբապատկերը՝ մեծարում է նրանում ներկայացուած անձը»¹:

Համառօտ կերպով անդրադառնանք նաեւ Աստծոյ Ընտրեալների սրբապատկերներին, Ամենասրբուհի Կոյս Աստուածամօրից մինչեւ մեր հոգեւոր երկնակամարի բազմահազար սրբերը, որոնք հաճոյ եղան Տիրոջը:

Աստուածաբանական մեկնաբանութիւնը, այս հարցի վերաբերեալ, գերագոյն աստիճանի կենտրոնացած է Սուրբ Հոգու առանցքի շուրջ (հոգեկենտրոն է): Յովհան Դամասկացին գրում է. «Սրբերը, իրենց կեանքի ընթացքում արդէն իսկ, լի էին Սուրբ Հոգով: Նրանց մահից յետոյ, Սուրբ Հոգու շնորհը մնայուն կերպով թափանցում է նրանց հոգիներից, գերեզմանում դրուած նրանց մարմիններից, նրանց անձնական դիմագծերից ու կերպարանքներից եւ նրանց սրբապատկերներից ներս: Սա չի կատարուում ըստ նրանց բնութեան, այլ Սուրբ Հոգու շնորհի եւ ներգործութեան զօրութեամբ»²:

Հետեւաբար, սրբերի սրբապատկերների աստուածաբանութիւնը սերտօրէն կապուած է Սուրբ Հոգով լի նրանց անձին, քանի որ սրբերը, երկրային մարմնից բացի, ունեն նաեւ մի երկնային ինքնութիւն, ընկղմուած՝ Աստծոյ լոյսի մէջ: Աստուածամօր եւ սրբերի սրբապատկերները, ուրեմն, մեր առջեւ բացայայտում են նրանց փառաւորուած անձերի իրական դէմքը, որի միջոցով նրանք կարողացան հաճոյ լինել Աստծուն եւ վայելել Բարձրեալի յաւերժական երանութիւնը: Ա՛յլ խօսքերով ասած, իրենց սրբապատկերներում սրբերը պատկերուած եւ հաւատացեալների կողմից մեծարուած են իրենց երկնային կերպարանքի ներքոյ:

Ինչ վերաբերում է հրեշտակներին, «պաշտօններ ստանձնած այս հոգիներին, որոնք առաքւում են սպասաւորելու նրանց՝ ովքեր ժառանգելու են փրկութիւնը»³, Նոր Կտակարանը սահմանում է նրանց վարքը. «Տեսնելու էք երկինքը բացուած եւ Աստծոյ հրեշտակներին, որ բարձրանում ու իջնում են մարդու Որդու վրայ»⁴: Հին Կտակարանում, Աստուած Մովսէսին հրամայում է հրեշտակների կերպարանքով երկու արձաններ պատրաստել Ուխտի Տապանակի վրայ, որպէսզի նրանց միջով յայտնուէր եւ խօսէր Իսրայէլին. «Կը պատրաստես ոսկեայ կոփածոյ երկու քերովբէներ եւ կը դնես կափարիչի երկու ծայրերին: ... Ես քեզ կը յայտնուեմ այնտեղ ... կը տամ քեզ իմ պատուիրանները ... »⁵:

Հրեշտակների պատկերումը՝ մարդու կողմից Աստծոյ տեսութեան եղանակներից մէկն է, մարդու՝ որ այսպէս, անուղակի կերպով, փոխադրւում է աստուածային լոյսի մէջ եւ հոգու աչքերով հաղորդակցւում է Աստծոյ էութիւնից բխող շնորհին: Մարդկային կերպարանքով պատկերուած հրեշտակները հասանելի անձեր են, ըմբռնել կարողանալու համար մեզնից դուրս գտնուող աննիւթական աշխարհը, եւ արտայայտում են, իրենց առաւել ընկալելի դարձնող պատկերաւորման միջոցով, այն՝ ինչը որ անըմբռնելի ու անհասանելի է իրենց էութեան մէջ եւ մարդկանց համար հասկանալի է դառնում միմիայն հոգու հայեացքի եւ հոգեւոր փորձառութեան միջոցով, որ անցնում է տեսանելի իրականութիւններից այն կողմ: Այսպիսով, աստուածային բարութիւնը, որ հայելանում է հրեշտակների մէջ, կարող է դիտուել եւ մարդկանց համար դառնալ հիացումի, յափշտակութեան ու միսթիկ հայեցողութեան աղբիւր:

¹ Mansi XIII, 377; հմմտ. Denzinger-Schönmetzer, *Enchiridion Symbolorum. Definitionum et declarationum de rebus fidei et morum*, Barcellona-Friburgo-Roma 1976, nrr. 600-601.

² Սբ. Յովհան Դամասկացի, *De sacris imaginibus oratio* 1, 19.

³ Եբր 1, 14

⁴ Յվհ 1, 51

⁵ Ելց 25, 18. 22

Այսքանից հետեւում է՝ որ մարդը, Աստծոյ պատկերով ու նմանութեամբ ստեղծուած, Աստծոյ հետ իր յարաբերութեան ճշմարտութիւնը արտայայտում է նաեւ իր արո-եսոգաֆիոսական գործերի Գեղեցկութեամբ: Իրական սրբազան արո-եսոգը, իրօք, բացայայտում է մարդու ներքին Հոգե-որ գերառատ հարստութիւնը: Արուեստի միջոցով, երբ վերջինս հարազատ է ու գեղեցիկ, մարդկային հոգին վերանում է եւ մտնում հաւատքի ու երկրպագութեան մթնոլորտի մէջ, փառաւորելու համար Աստծոյ Խորհուրդը, որ Խորհուրդն է անսահման Գեղեցկութեան ու Սիրոյ:

Անշուշտ, գիտենք՝ որ ճշմարտութեան եւ սիրոյ գերագոյն Գեղեցկութիւնը յայտնուել է յանձինս Քրիստոսի, որպէս «Հօր փառքի ճառագայթում եւ կնիք նրա էութեան»¹: Յայտնուել է յանձինս Քրիստոսի, բայց որքան որ հնարաւոր է՝ պէտք է յայտնուի նաեւ մեզնում, քրիստոնէական առաքինութիւնների գործադրման շնորհիւ, լինելու համար այնպիսիք՝ ինչպիսիք Աստուած մեզ ստեղծել է. իր պատկերով ու նմանութեամբ:

Այստեղից հետեւում է՝ որ, խորքը խորքը, ամենամեծ արուեստագէտները Սրբերն են: Ծէսը նոյնպէս, ի միջի այլոց, մի նրբագոյն արուեստ է, որ ձգտում է ճիշտ այս նպատակին. հոգեպէս միշտ աւելի ու աւելի նրբացնել ու գեղեցկացնել մեզ Աստծոյ առաջ, որպէսզի Նա մեզնից իւրաքանչիւրի համար կարողանայ կրկնել. «Ահա իմ սիրելի որդին, որին հաճեցայ»²:

Այսպիսով, համառօտ ներկայացրինք սրբապատկերների վերաբերեալ Եկեղեցու ուղղափառ ուսմունքը: Սրբապատկերների հանդէպ որեւէ ա՛յլ մօտեցում հարազատ չէ Եկեղեցու Աւանդութեանը եւ զանազան անգամներ մերժուել է Եկեղեցու Հայրերի կողմից:

գ) Ե՞րբ ծիսակատարել

Ժամանակի ըմբռնումը Աստուածաշնչում եւ Ծիսական ժամանակը

Աստուած, յաւիտենական լինելով հանդերձ, կամեցաւ ստեղծել ժամանակը. «Սկզբում Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը»³: Այսպէս սկսեց իրագործել իր խորհրդաւոր ծրագիրը, որը դարեր շարունակ ծածուկ պահելուց յետոյ՝ բացայայտեց Յիսուս Քրիստոսի՝ իր Միածին Որդու եւ մեր Տիրոջ միջոցով, երբ ժամանակներն հասան իրենց լրումին⁴:

Աստուածաշունչը, ներկայացնելով եօթ օրերի վրայ բաշխուած արարչագործութեան պատմութիւնը, ցոյց է տալիս՝ թէ ինչպէս է Աստուած կամեցել բոլոր արարածներն աստիճանաբար ներմուծել ժամանակի ոլորտից ներս, կազմելու համար մի շրջանակ, պատշաճ՝ ընդունելու մարդուն, որը Ե՞րբ դուրս կը գար Աստծոյ ձեռքերից, իմաստ եւ նշանակութիւն կը տար իրեն նախորդած ամէն ինչի: Ժամանակը, հետեւաբար, լոկ վայրկեանների միմեանց յաջորդելը չէ, այլ տիեզերքի տեւողութեան չափանիշը երկրի վրայ մարդու ստեղծումից առաջ, եւ ապա՝ տեւողութեան չափանիշն է մարդկային պատմութեան, որի բաղկացուցիչ տարրերն են անթիւ անհամար սերունդները, մինչեւ աշխարհի վախճանը:

¹ Եբր 1, 3

² Մտթ 3, 17; 17, 5

³ Ծնն 1, 1

⁴ Հմմտ. Եփս 3, 9-11

Աստուած Ինքն է հաստատել ժամանակների յաջորդականութիւնը, որին հնագանդուում է ամբողջ արարչութիւնը. ցերեկուայ եւ գիշերուայ հերթափոխումը, աստղերի շարժումը, եղանակների քառանիւ ընթացքը. «Ամէն բան, ո՛վ Աստուած, հաստատեցիր չափով, թուով եւ կշռով»¹:

Իսրայէլի ժողովուրդը, իր կրօնական տօնացոյցից ջնջելով առասպելական եւ բազմաստուածեան ամէն տեսակի յուշ, վերիմաստաւորել է ժամանակի բնական պարբերական հանգրուանների սրբազան հուլիւնը, ամէն ամիս տօնակատարելով նորալուսինը², գարնանը՝ Զատիկը³, Բաղարջակերացը⁴, Երախայրիքը⁵ եւ առաջին բերքը⁶. ամռանը՝ Շաբաթների տօնը⁷, իսկ աշնանը՝ հունձքը⁸: Բոլոր այս տօնակատարութիւններին Յայտնութիւնը կամաց կամաց տուեց նոր իմաստ եւ նոր պարունակութիւն, այնպէս՝ որ սրանք վերածուեցին Աստծոյ արարքների «յիշատակման», արարքներ՝ միշտ ի նպաստ իր ժողովրդի:

Տարեկան այս տօներից բացի, Իսրայէլը յիշատակում էր նաեւ մի քանի բազմամեայ թուականներ. եռամեայ տասանորդները⁹, հանգստի տարին ամէն եօթ տարին եւ յոբելինական տարին ամէն յիսուն տարին մէկ¹⁰:

Եօթնօրեայ շաբաթուայ ընթացքում, ապա, գերագոյն աստիճանի կարեւոր տեղ էր զբաղեցնում Շաբաթը, Աստծուն մատուցուած պաշտամունքի եւ հանգստի պարտականութեան օրը:

Այս բոլորից բացի, ամէն օր կային նաեւ աղօթքին եւ զոհաբերութիւններին յատկացուած նախասահմանուած ժամեր: Այսպիսով, մարդկային կեանքի ամբողջ տեւողութիւնը ներկայանում էր ծիսակատարութիւններով զրոյմուած, որոնք ծառայում էին Իսրայէլին սրբացնելու եւ հաղորդակցութեան մէջ պահելու Աստծոյ հետ: Այս կերպ, Իսրայէլը, ապրելով կրօնական իմաստով այսքան լի մի ժամանակ, յառաջագիմում էր Աստծոյ հայեացքի ներքոյ, որն առաջնորդում էր նրան դէպի ժամանակների լրումը, հանգրուան առ հանգրուան հարստացնելով նրան նորանոր շնորհներով:

Բեթղեհէմում Յիսուսի ծնունդով՝ ժամանակներն հասնում են իրենց լրումին¹¹, որովհետեւ պատմութեան աստիճանական հասունացումը հասնում է իր գագաթնակէտին, Աստծոյ ծրագրերի համաձայն: Յիսուսի գալուստը կատարւում է «Հերովդէս թագաւորի օրօք»¹². բացայայտ կեանքի շրջանը սկսւում է «Տիբերիոս Կեսարի թագաւորութեան տասնհինգերորդ տարին»¹³, իսկ իր «բարի դաւանութիւնը կատարւում է Պոնտոս Պիղատոսի օրօք»¹⁴: Յիսուսի ամբողջ կեանքը կողմնորոշուած է եւ ընթանում է իր «ժամ»ի ուղղութեամբ¹⁵. ժամը մահուան, ժամը յարութեան:

Իր քարոզչութեան սկզբից ի վեր, Յիսուս Ինքը հռչակում է՝ որ «ժամանակները հասել են իրենց լրումին եւ մօտեցել է Աստծոյ արքայութիւնը»¹⁶, եւ իր

¹ Իմս 11, 20

² Հմմտ. 1Սմ 20, 5; Ամս 8, 5; Ես 1, 13

³ Հմմտ. Ելց 12

⁴ Հմմտ. Ելց 23, 15

⁵ Հմմտ. 2Օր 26, 1

⁶ Հմմտ. ՂԼտ 23, 10...

⁷ Հմմտ. Ելց 23, 16; 34, 22; ՂԼտ 23, 16

⁸ Հմմտ. Ելց 23, 16; 2Օր 16, 13

⁹ Հմմտ. 2Օր 14, 28...

¹⁰ Հմմտ. ՂԼտ 25

¹¹ Հմմտ. Գղտ 4, 4

¹² Մտթ 2, 1

¹³ ՂԿս 3, 1

¹⁴ Հմմտ. 1Տմ 6, 13

¹⁵ Հմմտ. Յվհ 17, 1

¹⁶ Մրկ 1, 15

ուսնկնդիրներին յորդորում է քննելու եւ ըմբռնելու իրենց ապրած ժամանակների նշանները¹: Իսկ խաչին դամուկելուց քիչ օրեր առաջ, արտասուում է Երուսաղէմի վրայ, «որովհետեւ չկարողացաւ ճանաչել Աստծոյ այցելութեան ժամանակները»²:

Իր առակներում, Յիսուս ակնարկել էր՝ որ Աստծոյ արքայութեան ընթացքը ուղղուած է դէպի ապագայ վերջնական ամբողջացումը, երբ, Համբարձումից յետոյ, վերադառնալու է փառքով եւ իրենց կատարեալ լրումին է հասցնելու խոստումներն ու ժամանակները: Այդ փառահեղ վերադարձի սպասման մէջ, այժմ ապրում ենք **Եկեղեցո՛ւ ժամանակը**, մի առանձնաշնորհեալ ժամանակ, որովհետեւ նրա գլխաւոր իւրայատկութիւնը Հոգու ներգործութիւնն է³. «բարենպաստ ժամանակ, փրկութեան ժամանակ»⁴: Շնորհի այս ժամանակաշրջանը հանդիսաւոր կերպով ծիսակատարում է ամէն կիրակի, **Տէր՝ջ օրը**, Ամենասուրբ Հաղորդութեան խորհրդում իրագործելով Քրիստոսի Զատկական Խորհուրդը, աղբիւրը յարութեան եւ կեանքի: Կիրակի օրերից իւրաքանչիւրը հանդիսանում է Եկեղեցու քայլած ճանապարհի հանգրուաններից մէկը, ճանապարհ՝ որի աւարտին, երբ իր վախճանին կը հասնի ժամանակը, կը հաստատուեն «նոր երկինքն ու նոր երկիրը»⁵, ուր մենք կը մասնակցենք Աստծոյ յաւիտենականութեանը:

Յատկապէս զանազան տօների ծիսակատարութեամբ է՝ որ Եկեղեցին չափում է ժամանակի քայլերը դէպի երկնքի «խոստացուած երկիրը»: Վկայում է՝ որ իր ամենախոր իրականութեան մէջ ժամանակն արդէն իսկ հասել է իր լրումին, որովհետեւ Որդու մարդեղութեամբ՝ Աստուած մտել է մարդու պատմութիւնից ներս: Յաւիտենականութիւնը մտել է ժամանակի մէջ եւ ծիսական իւրաքանչիւր արարողութիւն այս մուտքի խորհրդաւոր ծիսակատարումն է: Ծէսը, յիւրաւի, ծիսակատարում է յաւիտենականութիւնը, այսինքն՝ Աստծուն, որը յաւիտենական լինելով հանդերձ՝ մուտք է գործում ժամանակի սահմաններից ներս, լիացնում է ժամանակը, «բնակուելով մարդու հետ»: ապա մարդուն դուրս է բերում իր սահմաններից, որպէսզի իր լրումին եւ կատարելութեանը հասնի նոյն ինքն Աստծոյ յաւիտենականութեան մէջ: Սրանից հետեւում է, որ Յիսուս Քրիստոսի՝ մարդացած Խօսքի անձում ժամանակը դառնում է Աստծոյ ստորոգելիներից մէկը, Աստծոյ՝ որն ինքնըստինքեան յաւիտենական է: Յիսուսի ծնունդով սկսւում են վերջին ժամանակները⁶, վերջին ժամը⁷. սկսւում է Եկեղեցու ժամանակը, որ տեւելու է մինչեւ Յիսուսի երկրորդ գալուստը:

Ժամանակի հետ ունեցած Աստծոյ այդ յարաբերութիւնից բխում է **ժամանակը «ըբօցնել»**՝ պարտականութիւնը: Այսինքն այն՝ ինչը որ կատարւում է, օրինակի համար, երբ Աստծոյ հետ մտերմութեանը նուիրւում են որոշ ժամանակներ, օրեր կամ շաբաթներ, ինչպէս կատարւում էր Հին Ուխտի ժամանակներում եւ կատարւում է այժմ, թէեւ նոր կերպերով, քրիստոնէական կեանքում:

Քրիստոս ժամանակի Տէրն է: Այս պատճառով էլ Եկեղեցին Ծէսը ապրում եւ կատարում է տարուայ ընթացքում: Այսպիսով, **արեւայնի Գարին Հարսփանում է Ծիսական Գարին**, որը որոշ իմաստով վերարտադրում է Մարդեղութեան եւ Փրկագործութեան ամբողջ Խորհուրդը: Փրկութեան Խորհուրդները այսպէս յիշատակելով, Եկեղեցին հաւատացեալների առջեւ բացում է իր Տիրոջ փրկագործ արարքների ու արժանիքների հարստութիւնները, այնպէս՝ որ այս վերջիններս ներկայ են դառնում բոլոր ժամանակներում, որպէսզի հաւատացեալները կարողանան շփման մէջ մտնել նրանց հետ եւ լիանալ փրկութեան շնորհներով:

¹ Հմմտ. Մտթ 16, 1...

² Ղկս 19, 44

³ Հմմտ. Յվզ 16, 5-15; Հռմ 8, 15...

⁴ 2Կր 6, 2

⁵ Յյտ 21, 1

⁶ Հմմտ. Եբր 1, 2

⁷ Հմմտ. 1Յվզ 2, 18

Այսօր

Այսօր մեռելներից յարուցիլ են առաւ անմահ եւ երկնային Փեսան. քեզ աւետիս խնդութեան, երկրից հարս ընծայուած Եկեղեցի. ցնծութեան ձայնով օրհնիր Աստուծոյ, Սիրոն:

(Զատիկի Գիշերային Ժամերգութիւն)

Երբ Եկեղեցին ծիսակատարում է Քրիստոսի Խորհուրդը, բառերից մէկը հանդիսանում է որպէս իր աղօթքի չափանիշը. Այսօր, որպէս արձագանք Տիրոջ կողմից սովորեցուած աղօթքի¹ եւ Սուրբ Հոգու ընդունման²: Կենդանի Աստուծոյ այս «այսօր»ը, որից ներս մարդը հրաւիրուած է ներս մտնելու, Յիսուսի Զատիկի «ժամ»ն է, որ կտրում անցնում է ամբողջ պատմութիւնը եւ հանդիսանում է այդ պատմութեան գլխաւոր տարրը.

«Կեանքը իջաւ բոլոր էակների վրայ եւ բոլորը զգեստաւորուեցին մեծ լոյսով. արեւելքների Արեւելքը տարածուեց ամբողջ տիեզերքով մէկ, եւ Նա՛ ով ”առաւօտեան աստղից առաջ էր” եւ բոլոր մոլորակներից առաջ, անմահ ու անսահման, մեծն Քրիստոս փայլում է բոլոր էակների վրայ առաւել՝ քան արեւը: Այս իսկ պատճառով, մեզ համար՝ որ հաւատում ենք Իրեն, ծագում է լոյսի մի օր, երկա՛ր, յաւիտենակա՛ն, որ այլեւս մայր չի մտնում. խորհրդաւոր Զատիկը»³:

Փրկութեան պատմութեան ներսում հարկաւոր է գանազանել երկու տեսանկիւն. մէկը զուտ պատմական եւ հետեւաբար՝ անցողիկ, որովհետեւ վերջանում է գործողութեան կատարման աւարտին իսկ. միւսը՝ մնայուն, որ կայանում է հոգու տրամադրուածութեան մէջ, տրամադրուածութիւն՝ ընդունելու փրկութիւնը, տրամադրուածութիւն՝ որով կատարուեցին Քրիստոսի բոլոր գործերը Նրա երկրային կեանքի ընթացքում: Առաջինը – պատմականը – ակնյայտ է՝ որ չի կարող այժմէականացուել, ճիշտ որովհետեւ անցողիկ է եւ, հետեւաբար, վերջանում է գործողութեան կատարման աւարտին: Մինչդեռ միւսը – մնայունը – կարող է այժմէականացուել, ներկայ դարձուել, որովհետեւ Քրիստոսի փրկարար գործունէութիւնը, թէեւ պատմական տեսանկիւնից դիտուած՝ պատկանում է անցեալին, այնուամենայնիւ շարունակում է ներգործել եւ ազդել մեզներից իւրաքանչիւրին պարզեւուած շնորհի վրայ: Յիրաւի, Քրիստոսի պատմական գործունէութիւնը միայն մարդկային չէր, այլ մարդկային-աստուածային: Որպէս գործիք գործածուած մարդկային տարրի միջոցով ներգործում էր աստուածային զօրութիւնը, որն ամէնուր է եւ յաւիտենական:

Այստեղից հետեւում է՝ որ Քրիստոսի փրկարար գործունէութեան «յիշատակը» չի վերածուում անցեալի պարզ մտաբերման. նոյն Ինքն Քրիստոսի ներգործութիւնն է, որ յարուցիլ են է առել եւ «այսօր» իր Եկեղեցում եւ խօսքով ու գործով ներկայ է ծիսական արարողութիւններում: Քրիստոս «այսօր» իր խօսքն ուղղում է ինձ, Նա «այսօր» նաեւ իմ համար իրագործում է խորհուրդը, որ ծիսակատարում է խորանի վրայ: Այսօր, ուրեմն, եւ «Ծիսակատարում եւ ընդունում եմ Սբ. Ծննդեան, Զատիկի, Համբարձման, Հոգեգալստեան եւ փրկութեան պատմութեան միւս բոլոր կարեւոր հանգրուանների շնորհը: Ծէսի մէջ ներկայի, այսինքն՝ «այսօր»-ուայ վրայ դրուած շեշտը մարդկային պատմութիւնը մոռանալու կամ անցեալի տարածաչափութիւնը մերժելու համար չէ: Ընդհակառակն, իմ ներկայ իր մէջ ներառնում է անցեալը եւ այն ենթադրում է, ինչպէս ներառնում է նաեւ ապագայի մէջ ամբողջացումը: Բայց դէպի անցեալի գիրկը կատարուած իւրաքանչիւր վերադարձ կատարում է մեկնելով ներկայից, ուր ես

¹ Հմմտ. Մտթ 6, 11

² Հմմտ. Եբր 3, 7-4, 11; Սղմ 95, 8

³ Կեղծ-Իպոդիտոս Հռոմայեցի, In sanctum Pascha 1, 1-2.

ապրում եմ: Եւ այսպիսով, Աստուածաշնչում պարունակուած եւ Ծէսի մէջ խորհրդակատարուած Աստծոյ Խօսքը միաժամանակ անցեալի յեշտոտանէ և, ներկայութիւնն իմ Համար եւ ապագայ կեանքի կանխումբը:

Տիրոջ օրը¹

Քրիստոսի Յարութեան օրը սկզբնաւորուած առաքելական աւանդութեան համաձայն, Եկեղեցին ծիսակատարում է զատկական Խորհուրդը իւրաքանչիւր ութ օրը մէկ անգամ, այն օրը՝ որն իրաւացիօրէն կոչուած է **Տէրոջ Օր** կամ **Կիրակի**: Քրիստոսի Յարութեան օրը շաբաթուայ առաջին օրն է, յիշատակը արարչագործութեան առաջին օրուայ, եւ միաժամանակ՝ ութներորդ օրը, որում Քրիստոս, աւագ Շաբաթի իր «հանգստից» յետոյ, սկիզբ է տալիս Տիրոջ Օրուան, այն օրուան՝ որ մայրամուտ չունի: Տիրոջ Ընթրիքը այդ օրուայ կենտրոնն է, որովհետեւ նրանում հաւատացեալներին ամբողջ հասարակութիւնը հանդիպում է յարուցեալ Տիրոջը, որը հրաւիրում է իր խնջոյքին².

«Տիրոջ օրը, Յարութեան օրը, քրիստոնեաների օրը մեր օրն է: Տիրոջ օր է անուանուած ճիշտ սրա համար. որովհետեւ այսօր Տէրը յաղթական բարձրացաւ Հօր մօտ: Հեթանոսները անուանում են այն Արեւի օր. շատ լաւ, մենք նոյնպէս սիրով կարող ենք գործածել այս անունը. այսօր, արդարեւ, ծագեց աշխարհի լոյսը, այսօր յայտնուեց արդարութեան արեգակը, որի ճառագայթները պարգեւում են մեզ փրկութիւն»³:

Կիրակին ծիսակատարութեան նախընտրեալ օրն է, այն օրը՝ որում հաւատացեալները համախմբուած են, որպէսզի Աստծոյ Խօսքն ունենդրելով եւ Պատարագին մասնակցելով յիշատակեն Տէր Յիսուսի Չարչարանքները, Յարութիւնն ու փառքը, եւ որպէսզի իրենց երախտագիտութիւնը յայտնեն Աստծուն, որ իրենց վերածնել է «կենդանի յոյսով, շնորհիւ մեռելներէց Յիսուս Քրիստոսի Յարութեան»⁴:

Ծիսական տարին

Ծիսական տարին, հաշուի առնելով իր կառուցուածքը, հաստատուել է Եկեղեցու կողմից, նպատակամղուած՝ ծիսակատարելու Քրիստոսի Խորհուրդը որպէս «յիշատակ», «ներկայութիւն» եւ «մարգարէութիւն» կամ սպասում: Ծիսական տարին հաւատացեալներին օգնում է հանդիպելու Աստծուն, որն «այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուեց» աշխարհի փրկութեան համար⁵:

Սուրբ Եկեղեցին իր պարտքն է համարում սրբազան յիշատակմամբ տօնել, տարուայ ընթացքում սահմանուած օրերում, Յիսուս Քրիստոսի կողմից ի կատար ածուած փրկութեան գործը, Մարգեղութիւնից ու Ծնունդից մինչեւ Համբարձում ու Հոգեգալուստ⁶:

¹ Այստեղ, քանի որ խօսում ենք ծիսական ժամանակի մասին, մի քանի տողով միայն անդրադառնում ենք Կիրակի օրուայ նիւթին: Բայց քանի որ Կիրակի օրուայ վերաբերեալ Եկեղեցու Աւանդութեան ուսուցումը կարեւորագոյններից մէկն է, յաջորդ՝ երրորդ գլուխը ամբողջովին նուիրելու ենք նրա քննարկմանը:

² Հմմտ. Յվհ 21, 12; Ղկս 24, 30

³ Սբ. Հերոնիմոս, *In die Dominica Paschae homilia*.

⁴ Հմմտ. 1 Պտ 1, 3

⁵ Յվհ 3, 16

⁶ Սոյն առաջին մասի չորրորդ գլխում կը ջանանք համառօտ կերպով ներկայացնել ծիսական տարուայ ընթացքում տօնակատարուող Տէրութեան գլխաւոր տօները, նրանց պարունակած իմաստն ու հոգեկանութիւնը:

Եկեղեցու առաջին ժամանակներում, Ջատիկն էր քարոզչութեան, ծիսակատարութեան եւ քրիստոնէական կեանքի միակ կենտրոնը: Յայնժամ չէին ծիսակատարում Քրիստոսի *Խորհուրդները*, այլ՝ *Խորհուրդը*, եւ այն էլ միայն Կիրակի օրը, որպէս մէկ միակ տօն, որպէս Տիրոջ Օրը: Շուտով, սակայն, բոլորի մէջ առանձնացաւ մի մեծ կիրակի – «Աւագ Կիրակի», ինչպէս այն անուանում է Սուրբ Աթանասը 329 թուականին¹ – որը ներկայացաւ որպէս Ջատիկի տարեկան ծիսակատարութեան օր, ընդլայնուած՝ *չարեհան եւ օրեայով* եւ երկարաձգուած՝ յիսնօրեայ տօնակատարութեամբ: Աւելի ուշ, հաստատուեցին նաեւ ուրիշ տօներ, ինչպէս Համբարձումը, Հոգեգալուստը, Ծնունդը եւ Աստուածայայտնութիւնը, ունենալով մէկ միակ նպատակ. ընդգծել մարդուն ի նպաստ կատարուած Աստուծոյ գործունէութեան մասնակի տեսանկիւններն ու հանգրուանները: Այսուամենայնիւ, կասկածից դուրս էր՝ որ գոհաբանական իւրաքանչիւր Պատարագ (էութարիստիա) ծիսակատարում էր եւ միշտ ծիսակատարում է մահացած եւ յարուսթիւն առած Քրիստոսի ամբողջ Խորհուրդը, Քրիստոսի՝ որը որպէս Եկեղեցու Գլուխ ապրում եւ թագաւորում է Հօր եւ Սուրբ Հոգու հետ յաւիտեանս յաւիտենից:

Ամենասրբուհի Կոյս Աստուածամայր Մարիամին եւ Սրբերին ձօնուած տօնակատարութիւններում նոյնպէս, Եկեղեցին ծիսակատարում է *Քրիստոսի Խորհուրդը*, իր անդամներում ապրուած, հռչակելով եւ ներկայացնելով որպէս քրիստոնէական հերոսական կեանքի օրինակ:

Աստուծոյ ծրագրերում, Քրիստոսի Խորհուրդը մէկ է եւ անբաժանելի, բայց պատմութեան ներսում այդ նոյն Խորհուրդի իրականացման տեսանկիւնից դիտուած՝ զանազանում են երկու հանգրուաններ: Առաջինը Քրիստոսի *չարեհան* է (անցնելը, ելքը) մահից դէպի կեանք. երկրորդը՝ մեր անձնական *չարեհան* է մահից դէպի կեանք: Այս երկու ելքերը միմեանցից անջատ չեն, որովհետեւ երկրորդը ամբողջովին բովանդակուած է առաջինի մէջ: Յիրակի, յարուցեալ Քրիստոսն ինքն է միակորում այս երկու գատիկները, հաղորդելով մեզ իր կեանքը:

Սրանից հետեւում է, որ երկրորդ գատիկի նպատակը առաջինը մերը դարձնելն է, որպէսզի «կառուցուի Քրիստոսի մարմինը, մինչեւ որ բոլորս կը հասնենք Աստուծոյ Որդու հաւատքի եւ ճանաչողութեան միութեանը, կատարեալ մարդու վիճակին, այն չափով՝ որ պատշաճ է Քրիստոսի լիակատար հասունութեանը»²: Այստեղից բխում է մահուան եւ յարութեան մի ընթացք, որը մեզնից իւրաքանչիւրը պարտաւոր է իւրացնել, իրենը դարձնել, իր կեանքում վերարտադրելով Քրիստոսի կեանքը:

Պետրոս Առաքեալն իրօք յիշեցնում է՝ որ «ճիշտ սրան կանչուեցիք, քանի որ Քրիստոս նոյնպէս չարչարուեց ձեր համար, թողնելով ձեզ մի օրինակ, որպէսզի հետեւէք իր քայլերին»³: Այս նպատակին հասնելու համար, Յիսուս մեզ պարզեւում է հարկաւոր բոլոր շնորհները, որպէսզի մեր անձնական գատիկը իսկապէս լինի «մեր մարմնի մէջ լրացումը այն ամէնի՝ որ պակասում է Քրիստոսի չարչարանքներին, ի նպաստ իր մարմնի, որ է Եկեղեցին»⁴: Այս նպատակին հետեւելով, Եկեղեցին կարող է մէկը միւսի ետեւից ծիսակատարել Քրիստոսի կեանքի հանգրուանները, այսպէս ասած ընդլայնելով գատիկական միակ Խորհուրդի զանազան տեսանկիւնները: Մեր համար, որ Մկրտութեան շնորհիւ մահացանք եւ յարութիւն առանք ի Քրիստոս, ծիսական տարին այն ապահով առաջնորդն է՝ որ տալիս է մեզ հնարաւորութիւնը «ապրելու մշտապէս նորոգ մի կեանք ...», որը տանում է մեզ սրբացման եւ յաւիտենական պարգեւին»⁵:

Եզրակացնելով, հարկաւոր է ասել՝ որ Ծիսական Տարին յիշատակում է Քրիստոսի Խորհուրդները, վերաբովանդակում է փրկութեան ամբողջ պատմութիւնը,

¹ Սբ. Աթանաս Աղեքսանդրացի, *Epistula festivalis* 1, 10.

² Եփս 4, 12-13

³ 1 Պտ 2, 21

⁴ Կղս 1, 24

⁵ Հռմ 6, 4. 22

պատրաստում եւ կանխում է ժամանակի հանդիպումը յաւիտենականութեան հետ: Եւ Եկեղեցին, Ծիսական Տարուայ ընթացքում վերապրելով Քրիստոսի՝ իր Փեսայի եւ իր Գլխի Խորհուրդները, դառնում է Աստծոյ Խորհրդի կենդանի յայտնութիւնը, որը հռչակում եւ իրագործում է արարչութեան հաշտութիւնը Արարչի հետ, ի Քրիստոս Յիսուս:

դ) Ո՞ր ծիսակատարել

Մովսէսի եւ Ելքի ժամանակներից արդէն, Աստուած կամեցաւ յայտնուել որպէս մէկը՝ որ քայլում է իր ժողովրդի կողքին. Աստծոյ ներկայութիւնը բացայայտում էր յատուկ նշաններով, ինչպիսիք էին ամպը, ժողովարանի վրանը, Ուխտի Տապանակը, որոտումը, հուրը, քամին եւ, աւելի ուշ, Տաճարը: Սա մի ներկայութիւն էր, որ նախապատկերում եւ նախապատրաստում էր Աստծոյ փառքի յայտնութիւնը յանձինս իր Որդու, որը, երբ ժամանակներն հասան իրենց լրումին, «մարմնացաւ եւ Բնակ-եց մեր մէջ ... լի շնորհով եւ ճշմարտութեամբ»¹:

Յայնժամ Աստծոյ տաճարը դարձաւ Յիսուս Քրիստոսի մարմինը, որի մէջ «մարմնապէս Բնակ-ում է աստուածութեան լիութիւնը»²: Եւ քանի որ Քրիստոսի փառքը իր գազաթնակէտին հասաւ Զատկական Խորհրդի մէջ, ճիշտ իր մահուան եւ յարութեան միջոցով է՝ որ իր մարմինը դարձաւ Աստծոյ ճշմարիտ տաճարը կամ սրբավայրը. «Կործանեցէք այս տաճարը եւ ես երեք օրում կը վերակառուցեմ այն»³: Միակ ճշմարիտ տաճարը, հետեւաբար, Յիսուսի անարատ եւ փառաւորեալ մարմինն է:

Սա մի ճշմարտութիւն է, որը զարգանալով ընդգրկեց Քրիստոսի Խորհրդաւոր ամբողջ մարմինը, որ է Եկեղեցին: Սուրբ Հոգին Բնակ-ում է Եկեղեցու մէջ, ինչպէս իր ճշմարիտ տաճարում, առաջնորդում է Եկեղեցին դէպի ամբողջական ճշմարտութիւնը, միաւորում է սրբոց հաղորդութեան մէջ, կրթում եւ առաջնորդում է զանազան պարգեւներով եւ ճոխացնում է Եկեղեցին իր հոգեւոր պտուղներով:

Չարչարանքներից առաջ, Յիսուս ասել էր. «Ես կը խնդրեմ Հօրից եւ Նա ձեզ մի ա՛յլ Մխիթարիչ կը տայ, որպէսզի ընդմիշտ մնայ ձեզ հետ. ճշմարտութեան Հոգին ... : Դուք ճանաչում էք Նրան, որովհետեւ Բնակ-ում է ձեր մօտ եւ լինելու է ձեր մէջ»⁴: «Եթէ մէկը սիրում է ինձ, կը պահի իմ խօսքը, եւ իմ Հայրը կը սիրի նրան եւ կը զանք ու կը Բնակ-եմ նրա մօտ»⁵:

Պօղոս Առաքեալը հաստատում է, ասելով. «Մի՞թէ չգիտէք, որ դուք Աստծոյ տաճարն էք եւ Սուրբ Հոգին բնակուում է ձեզնում»⁶: «Մի՞թէ չգիտէք, որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճարն են, որ բնակուում է ձեզնում»⁷: «Դուք մարմնի իշխանութեան ներքոյ չէք, այլ՝ Հոգու, որովհետեւ Հոգին բնակուում է ձեզնում»⁸: Յովհաննէս Առաքեալը նոյնպէս հաստատում է նոյն գաղափարը. «Աստուած սէր է. ով յարատեւում է սիրոյ մէջ, բնակուում է Աստծոյ մէջ եւ Աստուած բնակուում է իր մէջ»⁹:

¹ Թվհ 1, 14

² Կղս 2, 8

³ Թվհ 2, 19

⁴ Թվհ 14, 16-17

⁵ Թվհ 14, 23

⁶ 1Կր 3, 16

⁷ 1Կր 6, 19

⁸ Հռմ 8, 11

⁹ 1Թվհ 4, 16

Սուրբ Հոգու մեր մէջ ներկայութեան եւ բնակութեան ամենախորին պատճառը կայանում է «երբ մէջ. «Աստուծոյ Որդին որեւիցէ մի խօսք է, այլ մի խօսք՝ որ ներշնչում է սէր»¹: Սուրբ Հոգու ներբնակութեան շնորհիւ, մենք ունենք այն սէրը՝ որ միաւորում է Հօրը եւ Որդուն²: Այդ սէրը մեզ դարձնում է Սրբերին համաքաղաքացի եւ Աստուծոն մտերիմ, եւ կառուցում է մեզ Առաքեալների ու Մարգարէների հիմքի վրայ, որպէս անկիւնաքար ունենալով Քրիստոս Յիսուսին: Սուրբ Հոգու ղեկավարութեամբ, քրիստոնեաների ամբողջութիւնը կառուցւում է լաւ կազմակերպուած, լինելու համար Տիրոջ սուրբ տաճարը: Այստեղից հետեւում է, որ Քրիստոսի եւ Սուրբ Հոգու հետ միութեամբ ապրող հոգիներից իւրաքանչիւրը Աստուծոյ տաճարն է, ուր «հոգիով եւ ճշմարտութեամբ»³ խորհրդակատարւում է Նրան մատուցուած պաշտամունքը եւ բացայայտւում է Նրա փառքը: Սբ. Լեւոն Մեծը գրում է. «Մկրտութեան խորհրդի շնորհիւ՝ դարձել ես Սուրբ Հոգու տաճարը: Պախարակելի վարքովդ քեզնից մի՛ հեռացրու այսքա՛ն պատուաւոր մի հիւր»⁴:

Նոր Ուխտի պաշտամունքը, կատարուած՝ «հոգիով եւ ճշմարտութեամբ», կապուած է, հետեւաբար, բացառապէս մէկ վայրի: Ամբողջ երկիրը սուրբ է եւ վստահուած՝ մարդկանց որդիներին: Երբ հաւատացեալները համախմբւում են մի տեղ, ամենակարեւոր իրողութիւնը ճիշտ իրենք են, որ հանդիսանում են «կենդանի քարերը», որոնք միանում են «հոգեւոր շէնքի կառուցման համար»⁵: Յարուցեալ Քրիստոսի Մարմինը այն հոգեւոր տաճարն է, որից բխում է կենդանի ջրի աղբիւրը: Սուրբ Հոգու ներգործութեամբ Քրիստոսին պատուաստուելով, «մենք տաճարն ենք կենդանի Աստուծոյ»⁶:

Այսուամենայնիւ, ուր չի խոչընդոտուում կրօնական ազատութիւնը, քրիստոնեաները կառուցում են աստուածային պաշտամունքին յատկացուած շինութիւններ: Այդպիսի տեսանելի եկեղեցիները, սակայն, պարզապէս ժողովման վայրեր չեն, այլ իմաստաւորում եւ յայտնում են Եկեղեցին, որ ապրում է այդտեղ, որպէս հաշտուած եւ Քրիստոսին պատուաստուած մարդկանց հետ Աստուծոյ բնակավայր:

Լինելով տեսանելի շինութիւն, քարաշէն եկեղեցին նշան է երկրի վրայ պանդուխտ Եկեղեցու եւ պարկէշն է երկնքի երանութեանն արդէն հասած Եկեղեցու:

Աղօթքի տունը – ուր մատուցւում է Սբ. Պատարագը. ուր համախմբւում են հաւատացեալները. ուր Աստուծոյ Որդու՝ զոհասեղանի վրայ մեզ համար ընծայուած մեր Փրկչի ներկայութիւնը պաշտուում է ի մխիթարութիւն հաւատացեալների – պէտք է վայելուչ լինի եւ յարմար՝ աղօթքին ու սրբազան արարողութիւններին: Աստուծոյ այս տներում, խորհրդանշանների ճշմարտութիւնն ու ներդաշնակութիւնը պէտք է բացայայտեն Քրիստոսին, որն այդ վայրում ներկայ է եւ գործում է: Այս իսկ պատճառով, թէեւ եկեղեցիներ կարելի է կառուցել՝ հետեւելով ճարտարապետական որեւէ ոճի, եւ այս կամ այն ոճին հետեւելու վերաբերեալ որեւէ արգելք չկայ, այսուամենայնիւ՝ մեզ համար միշտ գերադասելի է վառ պահել եկեղեցիների կառուցման հայ ճարտարապետութեան աւանդական ոճը, որը յագեցած է իմաստի ճոխութեամբ, զուսպ համեստութեամբ, աղօթքի եւ ամփոփման տրամադրելու կարողութեամբ, առանց այլեւայլ աւելորդութիւնների:

Եկեղեցիների շինուածքը ունի նաեւ վախճանաբանական իմաստ: Աստուծոյ տունն մտնելու համար հարկաւոր է «նշանել «Եմից, որը խորհրդանշում է մեղքով վիրաւոր աշխարհից անցքը դէպի նոր կեանքի աշխարհ, որին բոլոր մարդիկ կանչուած են:

¹ Սբ. Թովմաս Աքուինացի, *Summa theologiae* I, q. XLIII, a. 5 ad 2.

² Հմմտ. ՅվՏ 17, 26

³ ՅվՏ 4, 24

⁴ Սբ. Լեւոն Մեծ, *Discorso I del Natale*.

⁵ 1 Պտ 2, 5

⁶ 2Կր 6, 16

Տեսանելի եկեղեցին պատկերն է հայրական տան, դէպի որն է քայլում Աստուծոյ ժողովուրդը եւ ուր Հայրը «չորացնելու է նրանց աչքերի արցունքները»¹: Այս իսկ պատճառով, եկեղեցին տունն է Աստուծոյ Խոյնը որդիների, բաց եւ պատրաստ՝ ընդունելու:

Խորանը

Եկեղեցու Հայրերը, խորհրդածելով Աստուծոյ խօսքի շուրջ, առանց երկմտանքի հաստատում են՝ որ Քրիստոս եղաւ զոհը եւ միաժամանակ իր զոհի քահանան եւ Խոյնը: Իրօք, Եբրայեցիներին ուղղուած նամակը Քրիստոսին նկարագրում է որպէս երկնային տաճարի քահանայապետ եւ կենդանի խորան²: Իսկ Յայտնութեան գիրքը ներկայացնում է մեր Փրկիչը որպէս զոհաբերուած գառ³:

Ինչպէս Քրիստոս, Գլուխը եւ Ուսուցիչը, ճշմարիտ Խոյնն է, այնպէս էլ Իր աշակերտները, Իր մարմնի անդամները, հոգեւոր Խոյննէր են, որոնց վրայ Աստուծոն մատուցում է սուրբ կեանքի պատարագը: Այս մեկնաբանութիւնը նոյնպէս պատկանում է Եկեղեցու Հայրերին, քրիստոնէութեան ամենավաղ ժամանակներից սկսած: Օրինակի համար, Սբ. Իգնատիոս Անտիոքացիին գրում է իր բարեկամներին, մարտիրոսութիւնից քիչ օրեր առաջ. «Թողէք ինձ միայն սա. որ զոհաբերուեմ Աստուծոն, քանի որ խորանը պատրաստ է»: Սբ. Պողիկարպոս Զմիւռնացին նոյնպէս պատուիրում է այրիներին սրբութեամբ ապրել, «որովհետեւ խորան էք Աստուծոյ համար»: Այս մեծ Հայրերին արձագանքում է նաեւ Սբ. Գրիգոր Մեծը. «Ի՞նչ է Աստուծոյ խորանը, եթէ ոչ՝ հոգիները նրանց՝ ովքեր ապրում են սուրբ կեանքով: ... Մեծ իրաւացիութեամբ է, ուրեմն, Աստուծոյ խորան անուանում արդարների սիրտը»: Իսկ մի այլ մեկնաբանութեան համաձայն, որը նոյնպէս յաճախակի է հանդիպում Եկեղեցու Հայրերի գրութիւններում, հաւատացեալները՝ որ նուիրում են աղօթքին, առ Աստուած բարձրացնում են իրենց աղաչանքները եւ ընծայում են իրենց փառատրութեան պատարագը, իրենք իսկ հանդիսանում են այն կենդանի քարերը՝ որոնցով Քրիստոս կառուցում է Եկեղեցու խորանը:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս, զոհաբանական ընթրիքը հաստատելով որպէս նշան այն զոհաբերման՝ որ քիչ օրեր անց մատուցելու էր Հօրը խաչի խորանի վրայ, սրբագործեց սեղանը, որի շուրջ հաւատացեալները համախմբուելու էին՝ խորհրդակատարելու համար Իր Զատիկը: Խոյննը, հետեւաբար, զատկական պատարագման սեղանն է, որի վրայ մատուցուած հոգեւոր ընթրիքին նախագահում է ձեռնադրուած պաշտօնեան, ներկայացնելով Քրիստոս Տիրոջը եւ Նրա անունով անելով այն՝ ինչ Ինքը արեց եւ աւանդեց աշակերտներին, որպէսզի կատարէին Իր յիշատակի համար: Այս ամէնին է ակնարկում Առաքեալը, երբ ասում է. «Օրհնութեան գաւաթը, որ մենք օրհնում ենք, մի՞թէ հաղորդութիւնն է Քրիստոսի արեանը: Իսկ հացը, որ մենք բեկում ենք, մի՞թէ հաղորդութիւնն է Քրիստոսի մարմնին: Քանի որ կայ միայն մէկ հաց, բազում լինելով հանդերձ՝ մենք միայն մէկ մարմին ենք. բոլորս, իրօք, մասնակցում ենք միակ հացին»⁴:

Ամէնուր, ուր պարագաները ներում են, Եկեղեցու որդիները կարող են ծիսակատարել Քրիստոսի զատկական յիշատակումը եւ մասնակցել Տիրոջ ընթրիքին: Հաղորդութեան խորհրդի արժանապատուութեանը վայել է, սակայն, որ հաւատացեալները կառուցեն, ինչպէս հին ժամանակներում, խորաններ՝ որոնք սահմանուած լինեն Տիրոջ ընթրիքի խորհրդակատարմանը: Քրիստոնէական խորանը,

¹ Յյտ 21, 4

² Հմմտ. Եբր 4, 12-5, 10; 7, 1-10, 18

³ Հմմտ. Յյտ 5, 6; ...

⁴ 1Կր 10, 16-17

այսպիսով, իր էութեամբ իսկ ներկայանում է որպէս գոհաբանական գոհի մատուցման եւ զատկական ընթրիքի սեղան: Այս գոհասեղանի վրայ, խորհրդի քօղի ներքոյ, դարերի ընթացքում ներկայ է դարձնում խաչի վրայ մատուցուած գոհը, մինչեւ Քրիստոսի երկրորդ փառահեղ գալուստը: Այս սեղանի շուրջ են հաւաքուած Եկեղեցու որդիները, Աստուծոյ իրենց երախտագիտութիւնը յայտնելու եւ Քրիստոսի մարմնին ու արեանը հաղորդուելու համար:

Խորանների արժանապատուութիւնը ամբողջովին կայանում է Տիրոջ սեղանը լինելու իրողութեան մէջ: Հետեւաբար, թէեւ հին ժամանակներից ի վեր քրիստոնեաները խորաններ են կառուցել մարտիրոսների դամբանների վրայ կամ մարտիրոսութեան վայրում, կամ էլ որեւէ մի արդարի բնակութեան կամ ճգնութեան վայրում, մարտիրոսների մարմինները չէ՛ որ պատիւ են տալիս խորանին, այլ ճիշտ հակառակը՝ խորանն է վայելչութիւն շնորհում մարտիրոսների դամբաններին: Մարտիրոսների կամ ուրիշ Սրբերի մարմինները պատուելու համար է, ինչպէս նաեւ ցոյց տալու համար՝ որ անդամների գոհաբերումը սկիզբ եւ իմաստ է ստանում Գլխի գոհաբերումից, որ **խորանի քակ** դրուած են մարտիրոսների մասունքներ: Քրիստոսի խորհրդական գոհաբերումը, մինչդեռ, կատարուած է **խորանի վրայ**, որովհետեւ պատարագում է **Խորհի Համար**: Սրբերի մասունքները խորանի տակ դնելու աւանդութիւնը արձագանքն է Յովհաննէս Առաքեալի հոգեւոր տեսիլքի. «Խորանի տակ տեսայ հոգիները նրանց՝ ովքեր գոհաբերուեցին Աստուծոյ խօսքի եւ նրան տրուած վկայութեան համար»¹: Որովհետեւ թէեւ բոլոր Սրբերն էլ իրաւացիօրէն կոչուած են Քրիստոսի վկաներ, այնուամենայնիւ՝ ամբողջովին իւրայատուկ ուժ ունի արեան վկայութիւնը, որով՝ խորանի տակ տեղադրուած մարտիրոսների մասունքները արտայայտում են այս վկայութիւնը իր ամբողջութեամբ:

Իսկ ինչ վերաբերուած է խորաններին, որոնք հանդիսաւոր կերպով կրում են սրբապատկերներ, առանց մասունքներ ունենալու, այս խորանների վերաբերեալ նոյնպէս վաւերական են մինչեւ այժմ ասուածները, այսինքն՝ որ խորանը նուիրուած է միմիայն Աստուծուն, որովհետեւ միմիայն Աստուծուն է նուիրուած Գոհաբանական Պատարագը: Այս իմաստով է հարկաւոր ըմբռնել Եկեղեցու սովորութիւնը՝ խորաններ նուիրելու Աստուծուն ի պատիւ Սրբերի: Գաղափարը շատ լաւ են արտայայտում Սուրբ Օգոստինոսի հետեւեալ խօսքերը. «Ո՛չ թէ մարտիրոսներին, այլ մարտիրոսների Աստուծուն ենք նուիրում խորանները, թէեւ դա կատարում ենք ի յիշատակ մարտիրոսների»²:

Ամբիոնը կամ գրակալը

Քանի որ Գոհաբանական Պատարագի ծիսակատարութիւնը բաժանուած է Խօսքի պաշտամունքի եւ բուն Պատարագի, սրանից հետեւում է՝ որ արարողութիւնը պէտք է կենտրոնանայ երկու առանցքների շուրջ. Խօսքի պաշտամունքի ”վայրը” ամբիոնն է կամ գրակալը, ինչպէս բուն Պատարագի ”վայրը” խորանն է:

Աստուծոյ խօսքի կարեւորութիւնը պահանջում է, որ եկեղեցու շինութեան ներսում լինի յարմար մի վայր, որտեղից հնարաւոր լինի հռչակել Աւետարանը, մի վայր՝ որի ուղղութեամբ ակամայ եւ առանց դժուարութեան կենտրոնանայ հաւատացեալների ուշադրութիւնը: Մեր Հայ Եկեղեցում, Աւետարանը սովորաբար ընթերցուած է խորանի եզրին կանգնած եւ այդ պահին Աւետարանը դառնում է մեծ պատուի առարկայ (քչոցներով թափօր, խունկ, մոմեր): Որոշ արարողութիւնների ժամանակ, ընթերցումների համար գործածուած են նաեւ զեղազարդ գրակալներ: Այսուամենայնիւ, ուր խորանի ճարտարապետական շինուածքը, այսինքն՝ ընդարձակութիւնը թոյլատրում է, մեր կարծիքով նախընտրելի է կառուցել քարաչէն

¹ Յյտ 6, 9

² Սբ. Օգոստինոս, *Contra Faustum* 20, 21.

հաստատուն ամբիոն, խորանի նմանութեամբ, որը կ'իմաստաւորի ու կ'արտայայտի Աստծոյ Խօսքի կարեւորութիւնը քրիստոնեայ հասարակութեան կեանքում: Այդ ամբիոնի ճարտարապետական յորինուածքը պէտք է համապատասխանի աստուածային խօսքի արժանապատուութեանը եւ հաւատացեալներին մնայուն կերպով յիշեցնի, որ այն օրից ի վեր՝ ինչ Քրիստոս, մահուան դէմ յաղթական, յարուսթիւն է առել իր Հոգու գորութեամբ, պարգեւելու համար մեզ իր կեանքը, Աստծոյ խօսքի հոգեւոր ընթրիքը նոյնպէս անդադար մատուցուած է նոր Իսրայէլի օրդիններին:

Մկրտութեան ւազանը

Եկեղեցու կառոյցի ամենակարեւոր մասերից մէկն է Մկրտութեան ւազանը, ուր խորհրդակատարուած է Նոր Ուխտի առաջին խորհուրդը, որի շնորհիւ մարդիկ, հաւատքով միանալով Քրիստոս Տիրոջը, ստանում են որդեգրութեան Հոգին: Մկրտութեան շնորհիւ՝ մարդիկ անուանում են եւ իսկապէս դառնում են Աստծոյ օրդինները: Պատուաստուելով Քրիստոսին, Նրա մահուամբ եւ յարութեամբ, անդամակցում են Նրա մարմնին: Ստանալով, ապա, Դրոշմի խորհրդի ժամանակ, Հոգու օծումը եւ իրենց առաջին Հաղորդութիւնը, դառնում են Աստծոյ սուրբ տաճարը, Եկեղեցու անդամները, «ընտրեալ տոհմը, թագաւորական քահանայութիւնը, սուրբ ազգը, ժողովուրդը՝ որ Աստուած ձեռք է բերել իր համար»¹:

Մկրտութեան ւազանը մեր հոգեւոր եւ գերբնական կեանքի առաջին սրբաձայնն է, որը պէտք է յաճախ այցելենք, որոշ պահեր կանգ առնենք նրա մօտ, հայենք խաչուած Քրիստոսի խոցուած կողից բխած այդ ջրին, բխած՝ համայն աշխարհի փրկութեան համար, եւ կրկին ու կրկին նորագենի մեր մկրտութեան Հասարակութեան խոսքով, որոնցով սկսուեց մեր նոր գոյութիւնը որպէս Աստծոյ օրդիններ: Պարզ կողմնորոշման համար տալիս ենք հետեւեալ աղօթքը, բայց ամէն ոք կարող է, եւ թերեւս նաեւ նախընտրելի է, արտայայտուել սեփական սրտից ծնուած մտածումներով:

«Հրաժարուում եմ չարի բոլոր խաբէութիւններից, յատկապէս՝ նախանձից ու ատելութիւնից:

Հաւատում եմ Աստծուն, ամենակալ Հօրը, երկնքի ու երկրի Արարչին:

Հաւատում եմ Յիսուս Քրիստոսին, Աստծոյ միածին Որդուն, մեր Տիրոջը, որ ծնուեց միշտ կոյս Մարիամից, մահացաւ, թաղուեց, յարութիւն առաւ, համբարձաւ եւ նստեց Հօր աջ կողմը:

Հաւատում եմ Սուրբ Հոգուն, որ Հօր եւ Որդու հետ փառաբանում է ու երկրպագում:

Հաւատում եմ մէկ, ընդհանրական, առաքելական, սուրբ Եկեղեցուն. մէկ մկրտութեան, մեղքերի քաւութեան եւ թողութեան համար. սրբերի հաղորդութեանը. մարմնի յարութեանը եւ յաւիտենական կեանքին:

Սա՛ է իմ հաւատքը: Սա՛ է Եկեղեցու հաւատքը: Եւ ես պարծենում եմ՝ այս հաւատքը դաւանելու համար: Քրիստոս Յիսուսի՝ մեր Տիրոջ շնորհով, որին Հօր եւ Սուրբ Հոգու հետ փառք յաւիտեանս. ամէն»:

Զանգերը

Հինաւուրց ժամանակներից է՝ ինչ սկսուել է յատուկ նշաններով կամ ձայների գործածութիւնը, զանազան արարողութիւնների կամ հասարակութեան կեանքի կարեւոր պարագաների դէպքում ժողովուրդն ի մի հաւաքելու համար: Հին Կտակարանում յիշատակուած է շփոթի, այսինքն՝ խոյի եղջիւրի գործածութիւնը, որը

¹ 1 Պտ 2, 9

արտագրում էր միայն երկու կամ երեք նոտա, որոնք այնուամենայնիւ բաւական էին ժողովրդին ազգարարելու համար պատերազմների կամ տօնակատարութիւնների սկիզբը:

Արդ, զանգերը նոյնպէս հնչեցուում են՝ հաւատացեալներին աղօթքի հրաւիրելու համար, ազգարարելով Սբ. Պատարագի կամ ժամերգութիւնների սկիզբը, կամ նաեւ տեղեկացնելու համար որոշակի կարեւորութիւն ունեցող դէպքեր, լինի ուրախալի՝ թէ տխուր: Զանգերի ղօղանջը իրեն յատուկ եղանակով արտայայտում է Աստուծոյ ժողովրդի զգացումները, երբ ցնծում է եւ երբ արտասուում, երբ յայտնում է Աստուծոյ իր երախտագիտութիւնը եւ երբ մատուցում է իր աղաչանքները, եւ յատկապէս՝ երբ, բոլորը մի տեղ հաւաքուելով, հաւատացեալները բացայայտում են իրենց միութեան խորհուրդը ի Քրիստոս Յիսուս:

Երբ կառուցուում է մի նոր եկեղեցի, տեղադրուելուց եւ գործածուելուց առաջ՝ զանգերը օրհնում են յատուկ արարողութեամբ, որի ընթացքում Եկեղեցին փառաւորում է Աստուծոյ, որովհետեւ աշխարհի առաջին արշալոյսից սկսած **Հնչեցնում է** իր ձայնը մարդու ականջներին եւ հրաւիրում է աստուածային կեանքի հետ հաղորդակցութեան, քօղագերծելով իր խորհուրդները եւ յայտնելով ու մատնանշելով անցնելիք ճանապարհը: Եկեղեցու Արեւմտեան Ծէսը, օրինակ, այսպէս է աղօթում Տիրոջը. «Օրհնիր, Տէր, Քեզ նուիրուած այս զանգերը: Ծնորհիր, որ ընտանիքիդ անդամները, լսելով սրանց ձայնը, դէպի Քեզ ուղղեն իրենց սրտերը եւ մասնակցելով եղբայրների ուրախութիւններին ու վշտերին՝ հաւաքուեն Քո տանը, այնտեղ զգալու համար Քրիստոսի ներկայութիւնը, ունկնդրելու համար Քո խօսքը եւ բացելու համար իրենց սիրտը Քո առաջ որդիական վստահութեամբ, շնորհիւ Սուրբ Հոգուդ»:

Զանգերը, արձագանքելով Եսայի մարգարէի կոչին, որ ասում է. «Բարձրացրու ձայնդ շեփորի նման»¹, ինչպէս նաեւ Յովէլ մարգարէի, որ կրկնում է. «Հնչեցրէք շեփորը Սիրոնում»², մեզ նոյնպէս հրաւիրում են լինելու **չնփոյնեք** կամ **չփոյնեք**, որոնք խօսով եւ կեանքի վէպայութեամբ անվախ հնչում են՝ արմատախիլ անելու համար չարիքը եւ բոլորին խրախուսելու բարեգործութեան, ունկնդրելով Աստուծոյ խօսքը եւ այն գործադրելով հաւատարմութեամբ:

ԾԻՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ծիսական ասանդութիւնները եւ Եկեղեցու ընդհանրականութիւնը

Երուսաղէմի առաջին քրիստոնեաների խմբից սկսած մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը, Աստուծոյ Եկեղեցիները, հաւատարիմ մնալով Առաքեալների հաւատքին, ամէնուր ծիսակատարում են Զատիկական միեւնոյն խորհուրդը: Ծէսում յիշատակուած խորհուրդը մէկ է, բայց զանազան են կերպերը, որոնցով այն ծիսակատարւում է:

Քրիստոսի խորհրդի անճառելի հարստութիւնը այնպիսին է, որ ծիսական աւանդոյթներից ոչ մէկը չի կարող սպառիչ կերպով արտայայտել այն: Այս ծէսերի ծնունդի ու զարգացման պատմութիւնը վկայում է՝ թէ բոլորն էլ ամբողջացուցիչ են մէկը միւսի համար: Երբ Եկեղեցիները ապրել են ծիսական այս աւանդոյթները միմեանց միջեւ հաւատքի եւ հաւատքի խորհուրդների հաղորդակցութեամբ, փոխադարձաբար հարստացել են, աճելով Աւանդութեան եւ ամբողջ Եկեղեցուն վստահուած ընդհանուր առաքելութեան հանդէպ հաւատարմութեան մէջ:

Ծիսական զանազան աւանդոյթները ծնուել են Եկեղեցու առաքելական կարիքներից: Աշխարհագրական եւ մշակութային միեւնոյն տարածքի Եկեղեցիները

¹ Ես 58, 1

² Յվլ 2, 1

Հասել են ծիսակատարելու Քրիստոսի Խորհուրդը իւրայատուկ արտայայտութիւններով, որոնք բնորոշ են տեղական մշակոյթներին. «Հաւատքի աւանդի» աւանդման¹, ծիսական պատկերաբանութեան, եղբայրական հաղորդակցութեան կազմակերպման, խորհուրդների աստուածաբանական ըմբռնման եւ սրբութեան զանազան կերպերի մէջ: Այսպիսով, Քրիստոս, բոլոր ժողովուրդների Լոյսն ու Փրկութիւնը, տուեալ Եկեղեցու ծիսական կեանքի կողմից հռչակուած է ժողովրդին եւ մշակոյթին, որոնց մօտ առաքուած է եւ որոնց մօտ արմատացած է: Եկեղեցին ընդհանրական է. կարող է, հետեւաբար, իր միութեան մէջ ամբողջացնել, մաքրագործելով, մշակոյթների բոլոր իրական հարստութիւնները:

Եկեղեցում այժմ գործածուող ծէսերը հետեւեալներն են. բիւզանդական ծէսը, հայկական ծէսը, աղեքսանդրեան կամ Ղպտի ծէսը, ասորի ծէսը, մարոնիթ ծէսը, քաղդէական ծէսը եւ լատին ծէսը, որը բաղկացած է գլխաւորաբար հռոմէական ծէսից եւ որոշ տեղական Եկեղեցիների ծէսերից, ինչպիսիք են ամբրոզեան ծէսը եւ որոշ Միաբանութիւնների ծէսերը: Սուրբ Մայր Եկեղեցին, աւանդութեան հանդէպ հաւատարիմ յարգանքով, օրինապէս ճանաչուած բոլոր ծէսերը ընդունում է հաւասար իրաւունքներով ու պատուով, եւ փափաքում է՝ որ ապագայում դրանք պահպանուեն ու ծաղկեն:

Ծէսը եւ մշակոյթները

Ծիսակատարութիւնը, հետեւաբար, պէտք է համապատասխանի զանազան ժողովուրդների հանճարին ու մշակոյթին: Որպէսզի Քրիստոսի Խորհուրդը «յայտնուի ... բոլոր ժողովուրդներին, որպէսզի հնազանդուեն հաւատքին»², այն պէտք է աւետարանուի, ծիսակատարուի ու ապրուի բոլոր մշակոյթներում, այնպէս՝ որ այս վերջինները չեն ջնջուած, այլ պահպանուած են եւ շնորհիւ նրա՝ կատարելութեան հասնում: Աստուծոյ որդիների բազմութիւնը, յիշաւի, մօտեցել է Հօրը՝ փառաւորելու համար Նրան մէկ միակ Հոգու մէջ, իր սեփական մարդկային մշակոյթի հետ եւ միջոցով, որը Քրիստոսի կողմից վերցուած եւ կերպարանափոխուած է:

Ծէսի եւ յատկապէս եօթ խորհուրդների «աստուծոյ մէկը անփոփոխելի է, որովհետեւ ունի աստուածային հիմնարկութիւն, որ պահպանուած է Եկեղեցու կողմից, իսկ «ԲՊԶ մասեր էլ կարող են ենթարկուել փոփոխման», որի իշխանութիւնը եւ երբեմն նաեւ պարտականութիւնն ունի Եկեղեցին, մօտ ժամանակներում աւետարանուած ժողովուրդների մշակոյթներին դրանք համապատասխանեցնելու համար:

Ծիսական տարբերութիւնները կարող են աղբիւր հանդիսանալ փոխադարձ հարստացման, բայց կարող են յառաջ բերել նաեւ լարուածութիւն, անհասկացողութիւններ եւ միմեկի հակ հերձուածքներ: Այս հարցի վերաբերեալ յստակ է՝ որ տարբերութիւնները չպէտք է վնասեն միութեանը, որը չի կարող արտայայտուել՝ եթէ ոչ միայն ընդհանուր հաւատքի, խորհրդակատար նշանների հանդէպ հաւատարմութեան միջոցով, որոնք Եկեղեցին ստացել է Քրիստոսից, ինչպէս նաեւ նուիրապետական հաղորդակցութեան միջոցով: Մշակոյթների հետ համապատասխանեցումը պահանջում է նաեւ սրտի դարձ եւ, եթէ հարկաւոր է, խզում պապենական սովորոյթների, եթէ դրանք անհաշտելի են նկատուած ուղղափառ հաւատքի հետ:



¹ Հմմտ. 2Տմ 1, 14

² Հռմ 16, 26